

### ՅՈՒՍԷՓ ՄԱՐԿՎԱՐՏ ԵՒ ԻՐ ՀՇՅՈՒՄՆԵՐԸ

(Մահուան առթիւ):

Հայագիտական աշխարհին քաջածանօթ եւ «Հանդէս Ամսօրեայ»-ի աշխատակից ու Բերլինի համալսարանի ուսուցչապետ Յոսէփ Մարկվարտ փետրուար 3-ի գիշերը զոհ գնաց մի դժբախտ պատահարի:

Այդ օրը երեկոյեան իր սովորական դասախօսութիւնները կարգալուց եւ «Գերմանա-արեւելագիտական ընկերութեան» մի նիստին մասնակցելուց յետոյ, Մարկվարտ ուշ տուն է վերադառնում եւ անմիջապէս անկողին մտնում: Առաւօտեան, երբ տնտեսուհին վար է իջնում եւ պրոֆեսորի ննջասենեակի դուռը դարձնում, ներսից պատասխան չի լսում: Տնտեսուհին նոր դզում է, որ օրը սոգորուած է օգային գաղով, կոհնում է դժբախտութիւնը եւ անմիջապէս ներս մտնելով՝ պրոֆեսորին գտնում է անշնչացած վիճակի մէջ, երեսնի վար ընկած անկողնի վրայ հակառակ ուղղութեամբ, — իսկ գաղի լամպի կտուցը՝ կիսաբաց:

Անմիջապէս օգնութեան կանչուած բժիշկը եւ ոստիկանները ջանք են թափում վերակենդանացնել մարմինը, որ դեռ տաք է լինում, բայց անհետեանք: Կատարուած քննութիւնը պարզում է, որ Մարկվարտ զոհ է գնացել դժբախտ պատահարի, գաղի լամպի կտուցը լաւ չկողպելով:

Անուանի արեւելագետի եւ հայագէտի դժբախտ մահուան լուրը անմիջապէս տարածուեցաւ Բերլինի թերթերի միջոցով, որոնք միեւնոյն ժամանակ գնահատականն արին նրա գիտական ծառայութիւններին: Հանդուցեալի միակ ժառանգոր, դեռահաս դուստրը, այլ եւ երկու եղբայրները եւ քոյրը ընդ փոյթ Բերլին եկան իրենց հայրենի վիւրթմբերգից, որ է նաեւ նրանց մշտական բնակավայրը: Ամսի 7-ին հանգուցեալի բնակարանում տեղի ունեցաւ հոգեհանգստեան պաշտօն, ներկայութեամբ իր մի շարք պաշտօնակիցների ու բարեկամների, այլ եւ Բերլինի հայ գաղութի անդամների: Կաթողիկէ բանասէտի պատշաճ խօսքից յետոյ համալսարանի կողմից գամբանական խօսքի փոխարինող քառամսեակի ղեկավար Գրոֆ Գրիմի (Prym) մօտ մասնաւոր — գիտական քարտուղարի պաշտօն է կատարում: 1897 թուականից մինչեւ 1900 Տիւբինգէնի համալսարանում է պաշտօնավարում որպէս պրիւատ-դոցենտ, աւանդելով հին պատմութիւն. 1900-ին կանչուած է Լայպցնի (Հոլանդիա) ազգագրական թանգարանը, գիտական պաշտօնով, ուր եւ մնում է մինչեւ 1911 թուականը:

1912-ին Մարկվարտ հրաւիրուած է Բերլինի համալսարանը, որպէս յաջորդ հռչակաւոր լեզուաբան եւ հայկարան Նիկ. Ֆինկի (N. Finck), որ մեռաւ զրեթէ երիտասարդ հասակում: Այդ հմուտ գիտնականը, որ մեծ ապագայ էր խոստանում, հիմք դրաւ ինչպէս յայտնի է, «Հայ բանասիրութեան Հանդէս»-ին (Zeitschrift für die armenische Philologie), որ դժբախտաբար կարճատեւ կեանք միայն ունեցաւ:

Յոսէփ Մարկվարտ (Josef Marquart եւ կամ ինչպէս որ մինչեւ վերջին տարիներս էր տառադարձուած իր ազգանունը, Markwart) ծնուել է 1864 թուականի Դեկտեմբեր 9-ին, Հարաւային Գերմանիայի Վիւրթեմբերգ երկրամասի Ռայխենբախ (Reichenbach) վայրում, կաթողիկէ ծնողների յարկի տակ: Հայրենի բնագաւառում տարրական եւ միջնակարգ կրթութիւն ստանալուց յետոյ՝ մտնում է Տիւբինգէնի (Tübingen) համալսարանը եւ հետեւում աստուածաբանական, արեւելագիտական եւ պատմական գիտութեանց: Մասնաւորապէս ուսումնասիրում է արեւելեան եւ դասական լեզուները: Բացի Քրանսերէնից եւ անգլիերէնից, որ գէթ օգտուելու չափ գիտեն ասահասարակ գերմանական բոլոր գիտնականները, Մարկվարտ ուսումնասիրել էր նաեւ ռուսերէն, այդ լեզուով գրուած մասնագիտական աշխատութիւններից եւս օգտուելու համար: Ուսած էր հիմնովին՝ յունարէն, լատիներէն, եբրայեցերէն, ասորերէն, արաբերէն, պարսկերէն, աֆղաներէն, հայերէն եւ այլ կովկասեան լեզուներ: Մասնագէտ էր յատկապէս իրանական լեզուների ու հայերէնի, իսկ նախապէս նաեւ թրքերէնի: Հայերէնի իր ուսուցիչը եղած է ժամանակի ծանօթ հայագէտ Ֆէտտեր, որի հայկական աշխատութիւնները հայերէնի թարգմանելով մի հատորի մէջ է ամփոփել Է. Տաշեան, «Ազգ. Մատենագրան»-ի շարքում:

Տիւբինգէնի համալսարանը աւարտելուց յետոյ Մարկվարտ մի որոշ ժամանակ Պրոֆ. Պրիմի (Prym) մօտ մասնաւոր — գիտական քարտուղարի պաշտօն է կատարում: 1897 թուականից մինչեւ 1900 Տիւբինգէնի համալսարանում է պաշտօնավարում որպէս պրիւատ-դոցենտ, աւանդելով հին պատմութիւն. 1900-ին կանչուած է Լայպցնի (Հոլանդիա) ազգագրական թանգարանը, գիտական պաշտօնով, ուր եւ մնում է մինչեւ 1911 թուականը:

1912-ին Մարկվարտ հրաւիրուած է Բերլինի համալսարանը, որպէս յաջորդ հռչակաւոր լեզուաբան եւ հայկարան Նիկ. Ֆինկի (N. Finck), որ մեռաւ զրեթէ երիտասարդ հասակում: Այդ հմուտ գիտնականը, որ մեծ ապագայ էր խոստանում, հիմք դրաւ ինչպէս յայտնի է, «Հայ բանասիրութեան Հանդէս»-ին (Zeitschrift für die armenische Philologie), որ դժբախտաբար կարճատեւ կեանք միայն ունեցաւ:

Ֆինկի համեմատական լեզուաբանութեան ուսուցչապետ էր Բերլինի համալսարանում: Հայերէն դասախօսել է նա երկրորդաբար միայն, որպէս կողմնակի առարկայ: Իսկ Մարկվարտի համար, առաջին անգամ լինելով, ինչպէս որ հանգուցեալն էր շեշտում միշտ մի առանձին գոհունակութեամբ, Բերլինի համալսարանում հիմնում է յատուկ ամբիոն՝ իրանական եւ հայկական բանասիրու-

թեան: Բացառապէս հայ բանասիրութեան եւ կամ ասահասարակ հայագիտութեան համար յատուկ ամբիոն գոյութիւն չունի Գերմանիայում: Գերման հայագէտները միշտ էլ ունեցել են ուրիշ ամբիոն — հնդեւրոպական լեզուների, համեմատական լեզուաբանութեան, բիւզանդագիտութեան, իրանագիտութեան, պատմական գիտութեանց, եւ այլն: Որպէս օժանդակ գիտութիւն միայն նրանք աւանդել են հայերէն լեզու եւ բանասիրութիւն: Նոյնն է նաեւ այսօր<sup>2</sup>: Դարձեալ մի մեծ քայլ առաջ էր, որ, ինչպէս ասացինք, Մարկվարտի պաշտօնավարութեամբ Բերլինի համալսարանում հիմնուած է մի ամբիոն, որ յատուկ է իրանական եւ հայկական բանասիրութեան հաւասարապէս: Եւ մեծ խնդիր է ու հոգսի առարկայ այժմ, ինչպէս որ համալսարանի ներկայացուցիչն էր իր գամբանականի մէջ արտայայտուած, թէ արդեօք պիտի գտնուի մի յաջորդ, որ կարող լինէր բռնել Մարկվարտի տեղը: Դժբախտաբար, կարելի է ասել՝ չպիտի գտնուի այդպէս մէկը, գոնէ Գերմանիայում, որ իրանագէտ լինելով մէկտեղ՝ հաւասարապէս հայագէտ լինէր ու աւանդէր գիտութեան այդ երկու ճիւղերը, Մարկվարտի նման: Եւ արդէն իսկ տրուած են մի երկու անուններ, որոնք իրանագէտ են, բայց ոչ՝ հայագէտ:

\* \* \*

Մարկվարտ բանասէր-պատմաբան էր: Ունի ահագին թուով ուսումնասիրութիւններ — պատմութեան, թրքաբանութեան, իրանագիտութեան եւ մանաւանդ հայագիտութեան վերաբերեալ:

Իր առաջին աշխատութիւններից մէկը ուսումնասիրութեան առարկայ է դարձնում հին-թրքական արձանագրութիւնների ժամանակագրութիւնը («Die Chronologie der alttürkischen Inschriften», 1898): Մի ուրիշ հատոր էլ ուսումնասիրում է արեւելեան թուրք բարբառների («Osttürkische Dialektstudien», 1914):

Իրանագիտութեան է վերաբերում Մարկվարտի առաջին աշխատութիւններից մէկը, որ կրում է «Հետազոտութիւններ Իրանի» պատմութեան մասին վերնագիրը («Untersuchungen zur Geschichte von Eran», 1896—1905): Այնուհետեւ, որչափ իրանագիտական, նոյնչափ եւ հայագիտական հետազոտութիւն է Մարկվարտի հոյակապ եւ բնդարձակաձաւալ աշխատութիւնը՝ «Երանշահր, ըստ Աշխարհագրութեան կեղծ Մով-

<sup>2</sup> 1926 թ. սկսած, Բերլինի համալսարանին կից «Արեւելեան լեզուների Սեմինարում» աւանդուած է աշխարհաբար հայերէն: Բայց գիտական ճիւղ չէ այդ, այլ սոսկ ուսուցչական պաշտօն, այն եւս՝ ոչ հաստատուն, այլ կողմնակի միայն: Եւ առ հասարակ, «Սեմինար»ը, որ կենդանի լեզուների դպրոց է, հետապնդում է առաւելապէս դրժնական նպատակ:

սէս Սորենացի» («Eranšahr nach der Geographie des Ps. Moses Chorenaci», 1901):

Ընդհանուր պատմագիտական — տեղագրական եւ շեղագրական մի ներհուն ուսումնասիրութեանց մի շարք է «Արեւելեան-եւրոպական ու արեւելեան-ասիական հետախուզութիւններ» աշխատութիւնը, նուիրուած թ. եւ ժ. դարերի պատմութեան («Osteuropäische und ostasiatische Streifzüge», 1903): «840 թ. մինչեւ 940 թ. ընկնող ժամանակամիջոցը», ասում է Մարկվարտ իր այդ աշխատութեան յառաջաբանում, «կազմում է համաշխարհային պատմութեան ամենանշանաւոր փոխանցման շրջաններից մէկը: Այդ հարիւր տարուայ ընթացքում է, որ Եւրոպայի ու Ասիայի շեղագրական կազմը կսփռէ հայպէս կազմակերպուելու-աւարտուել է եւ կամ միւս մասով էլ, նախապատրաստուել»: Այդ դարաշրջանին է վերաբերում ահա ներկայ ընդարձակ ուսումնասիրութիւնը, որի մէջ առանձին հատուածներ են նուիրուած՝ Սաղարներին, Մաճառներին, Սլաւներին, Ռուսներին, Չիններին, այլ եւ մի շարք տեղագրական հարցերի պարզաբանութեան: Նոյն այդ հատորի մի ընդարձակ հատուածը նուիրուած է Բագրատունեաց ծագմանը, որի մասին ստորեւ խօսք կը լինի: Առանձին լոյս տեսած աշխատութիւններ են նաեւ՝ մի հատոր, նուիրուած Իսրայէլի եւ Յուդայի պատմութեանը («Fundamente israelitischer und jüdischer Geschichte», 1897), եւ մէկ ուրիշը՝ նուիրուած ժամանակագրական ուսումնասիրութեանց («Chronologische Untersuchungen», 1900): Բացի այս առանձին հատորներից՝ Մարկվարտ ընդհանուր արեւելագիտական — պատմագիտական եւ մասնաւորապէս հայագիտական մասնակի հետազոտութիւններ եւ յօդուածներ ունի դանազան ուսումնասիրութեանը, որ սակայն անկարելի է այստեղ մի առ մի յիշատակել: Այժմ մասնագրքերը մեր խօսքը հանդուցեալ գիտնականի այն աշխատութիւնների շուրջը, որ վերաբերում են հայագիտութեան ճիւղին: Բնական է, որ այս համառօտ յօդուածում թուրքիկ ակնարկ միայն նետել կարող ենք նրանց վրայ:

Մարկվարտի յիշատակուած աշխատութիւններից երկուսը արդէն, ինչպէս ասինք, մասամբ հայագիտական բնոյթ են կրում: «Երանշահր» մեծահատոր գրուածքը նուիրուած է Իրանի պատմական աշխարհագրութեան քննութեան, համաձայն Մովսէս Սորենացու: Եւ կամ ինչպէս որ Մարկվարտն է անուանում, Կեղծ Մովսէս Սորենացու Աշխարհագրութեան: 358 մեծածաւալ էջերից է բաղկացած՝ այդ հատորը, որ դեռ Տիւբինգէնի համալսարանում պրիւատ-դոցենտ եղած ժամանակ է գրել հեղինակը եւ լոյս ընծայել Գէօթինգէնի գիտութեանց կաճառի հետազոտական հրատարակութեանց

չարքում: Աշխատութեանը կցուած է մի յա-  
նաջարան, որին հետեւում է Մ. Խորենացիի  
Աշխարհագրութեան՝ Իրանին վերաբերեալ  
մասը, հայերէն բնագրով եւ գերմաներէն  
թարգմանութեամբ: Ապա գալիս են՝ աշ-  
խարհագրական անունների բազմակողմանի  
լուսաբանութիւն ու պատմագիտական ակ-  
նարկ՝ աշխարհագրական բաժանումների եւ  
նրանց կրած պատմական փոփոխութիւնների  
վրայ: Մարկվարտ լինելով հանդերձ այն  
տեսակէտին, որ Խորենացու անունով պա-  
հուած Պատմութեան եւ Աշխարհագրութեան  
հեղինակը միեւնոյն անձն է, անվերապահօ-  
րէն այն կարծիքն է յայտնում, թէ նա ապրել  
է ամենաշուտը է. դարու վերջերին, հաւա-  
նօրէն՝ Ը. դարու կէսերին, թերեւս ակելի,  
ուչ: Եւ առհասարակ, Մարկվարտ այն  
հայագէտներից մէկն է, որ խիստ քննական  
աչքով են մտնեցել Խորենացու հարցին:  
«Երանշահ» հատորի մի հատուածն է կազ-  
մում «Die armenischen Markgrafen» գրուելը,  
որ Հ. Թովմաս Կէտիկեանի թարգմանու-  
թեամբ նախապէս լոյս է տեսել «Հանդէս  
Ամսօրեայ»ում, որտեղից եւ արտասպառե-  
լով առնուել է «Ազգային Մատենադարան»  
չարքի մէջ (հատոր ԽԳ.):

Թէեւ ծաւալով փոքր, բայց ներքին ար-  
ժանիքով վերին աստիճանի շահեկան աշխա-  
տութիւն է Մարկվարտի մի ներհուսն ուսում-  
նասիրութիւնը, նուիրուած հայ գրերի ծագ-  
ման պատմութեան («Über den Ursprung  
des armenischen Alphabets»), որ 1913ին  
հայերէն եւս լոյս է տեսել, Հ. Ա. Վարդա-  
նեանի թարգմանութեամբ եւ առանձին Ազգ.  
Մատենադարանի շարքում (հատոր ԿԸ.):  
Այդ հետազոտութիւնը նախապէս կարգա-  
ցուած է եղել իրբեւ դասախօսութիւն 1902  
թուականին Համբուրգում, «Արեւելագէտ-  
ների Միջազգային Խորհրդագծով»-ի համա-  
գումարում: 1905ին մրցանակի է արժանա-  
ցել Մոսկուայի Լազարեան ձեմարանի կող-  
մից:

«Յեռ-քրիստոնէական շրջանում», ա-  
սում է Մարկվարտ, «Բարբարոս» լեզուների  
համար ստեղծուած այբուբենների շարքում  
Հայոց գրերի գիւտը անպայման ամենանշա-  
նակալիցն է»: Այդ մեծագոյն ղէպը հեղե-  
նակը «Համաշխարհային-պատմական արժէք  
ներկայացնող» մի երեւոյթ է անուանում,  
որի հետ հեռուոր կերպով անգամ բազմա-  
տոութեան գրուել կարող չէ գոթական նշա-  
նանագրերի գիւտը»: Եւ յետոյ. «Հայերէն  
այբուբենի գիւտով հայ ժողովուրդը կարո-  
ղացաւ պահպանել իր ուրոյն դիմագիծը եւ  
չլուծուել օտար պղծեցութեանց տակ, այլ  
ստեղծել մի բազմաառարար հարուստ  
գայրութիւն: Եւ այդ հայաստանի քաղաքա-  
կան ինքնուրոյնութեան կորուստից թիչ ա-  
ռաջ միայն»: Հարկաւ, գրերի գիւտով եւ  
քրիստոնէութեան հաստատումով Հայաստա-  
նում՝ մոռացութեան մատնուեցան անգիր

բանահիւսութեան շատ դանձեր, բայց դրանց  
փոխարէն՝ «ի կեանս կոչուեցաւ մի՛ բաղ-  
դատարար հարուստ՝ պատմական մատենա-  
գրութիւն, որ մեզ ոչ միայն հնարաւորու-  
թիւն է տալիս բաւական պայծառութեամբ  
հետեւելու Հայաստանի պատմութեանը Գ.  
դարու սկզբից սկսած, այլ եւ վերստուգե-  
լու պատմական անցուղարձները Պարսկաս-  
տանում եւ Կովկասեան երկիրներում»:

Ահա այսպիսի հոյակապ գործի — հայ  
գրերի գիւտի — հեղինակների՝ Ս. Սահակի  
եւ Մաշտոցի նման գաւակներ ծնող մի ժո-  
ղովուրդ, շեշտում է Մարկվարտ, «որ  
գիտէ մեծարել նրանց իրբեւ հերոսների, չէ՛  
կարող կործանուել»:

Մանրագին հետաքննութեան առարկայ  
դարձնելով գրերի գիւտի ժամանակը եւ  
պայմանները, դանիէլեան նշանագրերի, այլ  
եւ յարակից մի շարք ուրիշ խնդիրներ,  
Մարկվարտ յանգում է այն եզրակացու-  
թեան, թէ բովանդակ հայ պատմութեան  
նշանաւորագոյն ղէպը տեղի է ունեցել  
402—403 թուականին: Ըստ Մարկվարտի,  
Մաշտոց նորագիւտ այբուբենի հիմքում  
գրել է ասորի Դանիէլ կաթողիկոսի գործա-  
ծած — ո՛չ անպատճառ նաեւ՝ նրա հնարած  
— այբուբենը, ձեւակերպելով ու կատարե-  
լագործելով դայն: Հիմնուելով հնագրական  
եւ ուրիշ տուեալների վրայ՝ Մարկվարտ  
ակելի կամ պակաս հաւանութեամբ սահմա-  
նում է, թէ մեսրոպեան նշանագրերից որո՞նք  
ասորական, եւ որո՞նք յունական կամ պարս-  
կական նախատիպեր ունին:

Բայց եւ այնպէս, «թերեւս երբե՛ք կա-  
րելի չէ որոշակի սահմանել, թէ հայկական  
այբուբենի մէջ ի՞նչ բաժին ունին մի կող-  
մից Դանիէլը կամ նրա նախորդը, իսկ  
միւս կողմից՝ Մաշտոց եւ նրա ղեղաղլի՛  
Հոռիանոսը»:

«Բազրատունեաց ծագումը» աշխատու-  
թիւնը, ինչպէս ասինք, կազմում է մի հա-  
տուածը հեղինակի մեծարժէք «Արեւելեան-  
Եւրոպական եւ Արեւելեան-Ասիական հետա-  
գոտութիւններ» հատորի (էջ 391—465):  
Աւելի ուշ, 1915 թուականին Վիեննայում  
լոյս է տեսել հայերէն, թարգմանութեամբ  
Հ. Մ. Հապոյեանի, «Ազգային Մատենադա-  
րան» շարքում (հատ. ՀԳ): Հայերէն թարգ-  
մանութիւնը ճոխացուած է հեղինակի եւ  
թարգմանչի յաւելումներով եւ դիտողու-  
թիւններով: Թարգմանութեանը հեղինակը  
կցել է մի յատուկ յառաջարան:

Հետազոտութիւնը բազկացած է երկու  
մասից. ա. «Հայ Բազրատունեաց ճիւղա-  
գրութիւնը», Բ. «Վրական Բազրատունեաց  
ծագումը»: Յառաջարանի մէջ հեղինակը  
ճառում է. «Վրաստան ժ. Բ. դարէն յառաջ  
չափազանց աղքատ էր պատմական գրու-  
թիւններով եւ վաւերագրիներով: Ժամանա-  
կագրութիւնը (Վրական) մինչեւ Թ. դարու  
երկրորդ կէսը պատմական տեսակէտով ամ-

րողջապէս անարժէք է... Ի մասնաւորի  
շատ քիչ ծանօթ է արարական իշխանութեան  
ժամանակը»: Սերէոսի, Ղեւոնդի նման  
պատմիչներ չունին Վրացիք: Եւ, «արարա-  
կան շրջանին մէջ սահմանաքա՛ր մըն է այս  
երկրին մէջ հայ Բազրատունիներու մէկ  
ճիւղին նոր հարստութեան մը հիմնելը»:

Այդ նշանաւոր ղէպը մասին «անհաւա-  
տալի խառնաշփոթութիւն մը կը տրիէ ա-  
ւանդութեան մէջ», ասում է Մարկվարտ  
եւ, իր հետազոտութեանց համար հաստա-  
տուն կուտան գտնելու համար, նախ ամ-  
փոփում է Վրաստանի Զ.—Ը. դարերի վա-  
ւերական պատմութիւնը, սպա կազմում հայ  
Բազրատունիների ազգատախտակը՝ հայ եւ  
օտար ազգիւրների հիման վրայ, ներկայաց-  
նում Բազրատունեաց զարգացումը եւ նրանց  
մի ճիւղի Վրաստան գաղթելու ժամանակը:  
Հեղինակը մինչեւ Ժ. դարն է հետապնդում  
վրական Բազրատունիները: Բազրատունեաց  
մի ուրիշ ճիւղի՝ Տարօնի իշխանութեան մա-  
սին հանգամանօրէն խօսիլը վերապահում  
է «Հարաւային Հայաստան» հատորին:

«Հայ ազգի ծագումը եւ վերականգ-  
նումը» աշխատութեան («Die Entstehung  
und Wiederherstellung der armenischen Na-  
tion», 1919) նիւթը սկզբնապէս (1914)  
դասախօսուել է «Հայագրեման ընկերու-  
թեան» մի ժողովում: Երկու մասից է բաղ-  
կացած աշխատութիւնը: Առաջինում հեղե-  
նակը խօսում է հայ ազգի ծագման եւ  
Հայաստանում վերջնապէս հաստատուելու,  
իսկ երկրորդում շօշափում է հայ ազգի քա-  
ղաքական վերականգնման մասին: Զուտ գի-  
տական-բանասիրական արժէք ներկայացնում  
է առաջին մասը:

Անկարելի է այս սուղ էջերում հանգա-  
մանօրէն կանգ առնել Մարկվարտի այս խիստ  
արժէքաւոր գործի վրայ: Հետազոտութեան  
եզրակացութիւնն այն է թէ՛ «հայերը հնումը  
Եւրոպայում են ապրելու եղել, յոյների եւ  
Երակացիների նախահայերին մօտիկ»:  
Գաղթելով արեւմուտքից, ժամանակի ըն-  
թացքում հաստատուած են նախ Փոքր Հայ-  
քում» եւ յետոյ վերջնապէս (Ե. դար Գ. ա.),  
Երասխի հովտում: Հայերի (արմէն) մասին  
առաջին անգամ յիշատակութիւն կը լինի,  
ինչպէս յայտնի է, Դարեհ Ա. ի արձանագրու-  
թեան մէջ (520 թ. Գ. ա.): Դրա ղէմ Մարկ-  
վարտ այն համոզկեր կարծիքն է յայտնում,  
թէ դեռ շատ ակելի վաղ յիշատակում են ար-  
մէնները, այսպէս կոչուած՝ հոմերեան նա-  
ւացուցակի մէջ (Իլիական, Բ. 783) եւ  
արիւմ, արիւմներ անուան տակ:

Ինչ վերաբերում է հայերէնի գրաւած  
տեղին լեզուների շարքում, Մարկվարտ նրա  
հիմնական տարրը հնդեւրոպական է համա-  
րում, գտնելով ոչ թէ Իրանական, այլ Եւրո-  
պական ճիւղի շարքը: Սրանով մէկտեղ,  
հայերէնը ունի ոչ-հնդեւրոպական լեզուե-  
րից առնուած բազմաթիւ բառեր: Մարգա-

բանական կազմին դալով՝ Մարկվարտ հայե-  
րին ցեղակից է համարում հաթերին կամ  
հիթիթներին: Այսպիսով, հայերը գերա-  
զանցօրէն խառնուրդ ժողովուրդ են: Հետա-  
քրքրական են նաեւ այն էջերը, ուր խօսուած  
է հայերի եւ Աղուանների պատմական յա-  
րաբերութեանց մասին:

«Հանդէս Ամսօրեայ»-ի քառասնամեակի  
առթիւ հրատարակուած «Յիշատակարան»  
հատորում, որ մի հաւաքածու է Եւրոպացի  
հայագէտների հայկական ուսումնասիրու-  
թեանց, Մարկվարտ ստորագրել է մի ուշա-  
գրաւ ուսումնասիրութիւն (գերմաներէն),  
«Ակնարկներ Կովկասի պատմական տեղա-  
գրութեան եւ անցեալի մասին» վերնագրով  
եւ «Արքունի պողոտան Արտաշատից ղէպի  
Արմատիկա, հոմէական աշխարհաքա-  
տէսի վրայ» խորագրով:

Շատ ռիչ շօշափուած նիւթ է քննութեան  
առնում Մարկվարտ իր այս աշխատութեամբ,  
փորձելով «Հոմէական աշխարհաքառէսի»  
վրայ ճշտել արքունի այն պողոտայի ուղղու-  
թիւնը, որ Արտաշատից ձգուած էր ղէպի  
վրացական Արմատիկա կամ Արմազիցիէի  
կենդրոնը: Խիստ շահեկան են նաեւ այն տե-  
ղագրական-պատմական դիտողութիւնները,  
որ հեղինակը անում է իր հետազոտութեան  
ընթացքում եւ որոնք զուրկ չեն այժմէա-  
կանութիւնից:

Մարկվարտի հայագիտական աշխատու-  
թեանց շարքում աչքառու տեղ է գրաւում  
նրա «Հարաւային Հայաստան եւ Տիգրիսի  
աղբերակունք» տեղագրական-պատմական  
ընդարձակ ուսումնասիրութիւնը («Süd-  
armenien und die Tigrisquellen»), ըստ յոյն  
եւ արաբացի աղբերակների: Այս աշխատու-  
թիւնը մի զգալի մասով ժամանակին լոյս է  
տեսել «Հանդէս Ամսօրեայ»ում, հայերէն  
թարգմանութեամբ: Գերմաներէն ընդարձա-  
կուած բնագիրը, ճոխացուած նաեւ մի եր-  
կայն ներածութեամբ ու անուանացանկով,  
լոյս պիտի տեսնէ շուտով Վիեննայի Միլի-  
թարեան տպարանից: Յաւալի եւ վերահաս  
մահը արգելք եղաւ, որ անուանի գիտնականը  
իր աչքով տեսնէր դեռ 1911 թուականից մա-  
մուլի տակ գտնուող իր այդ երկի լոյս աշ-  
խարհ գալը, որի վերջին մամուլների (նե-  
րածութեան) սրբագրութիւնը դեռ նոր էր  
կատարել եւ կազմել նաեւ անուանացանկը:  
Ինչպէս իր «Հայ Ազգի ծագումը» հատորի  
ընդարձակ վերջաբանում, այնպէս եւ «Հա-  
րաւային Հայաստան» հատորի ներածութեան  
մէջ Մարկվարտ շօշափում է այժմէական  
հարցեր: Հատորը լոյս տեսնելուց յետոյ,  
անտարակոյս ենք, պիտի արժանանայ բա-  
նասիրութեան մասնաւոր ուշադրութեան:

Դժբախտաբար հնարաւորութիւն չու-  
նինք, ինչպէս ասինք, այստեղ յիշատակելու  
Մարկվարտի այլ գրութիւններն եւս, դանա-  
զան հանդէսներում եւ կամ ուրիշ լեզուե-

րով<sup>3</sup>: Դեռ անցեալ տարի էր որ Փրանսերէն լեզուով լոյս տեսաւ նրա մի աշխատութիւնը, արտատպուած Հայագիտական հանդէսից: Թերեւս մեր աչքից վրիպած ուրիշ հատորներ եւս: Եւ սակայն, կարեւորները բոլորն էլ յիշատակուեցան, կարծում ենք:

Բաւական մեծ է թիւը Մարկվարտի այն աշխատութիւնների եւս, որ դժբախտաբար դեռ եւս ձեռագիր վիճակի մէջ են գտնուում: Խնդիրն այն է որ, Հայագիտական եւ առհասարակ նման գուտ ուսումնասիրական գործերը շատ սահմանափակ սպառում միայն ունենալով, չեն գտնուում եւ կամ շատ մեծ դժուարութեամբ են գտնուում հրատարակչներ Գերմանիայում եւս: Ոչ միայն գիտնական հեղինակների աշխատանքը չի վարձատրուում, այլ եւ յաճախ նրանց գործերի տպագրութիւնը հեղինակներից նիւթական մեծամեծ զոհարելութիւններ է պահանջում: Մնում է միայն որ գիտական կաճառները, ընկերութիւնները եւ հանդէսները օգնութեան հասնին: Այդ ձեւով էլ լոյս են տեսել Մարկվարտի աշխատութիւններից շատերը, բայց ոչ բոլորը:

Դեռ եւս երեք տարի առաջ, հանգուցեալ գիտնականը ինձ ցոյց էր տուել իր մի շարք ձեռագիր Հայագիտական աշխատութիւնները, որոնցից հետեւեալներն վերնագրերն են և՛ գրի առել ժամանակին.  
 1. «Հայաստանի Պատմութիւնը, Գ. դարու սկզբից մինչև Ե. դարու կէսերը», 2. «Նորչիրական», 3. «Պարսկահայք», 4. «Բագրատունեաց ցեղարանութիւնը Մ. Խորենացիի եւ Մարարասի մօտ», 5. «Հնագոյն եկեղեցական պատմութիւն», 6. «Մանազկերտի ժողովրդը», 7. «Հայերը որպէս գաղթարեւելիներ, չին եւ միջին դարերում», 8. «Կորիւն, Վարք սրբոյն Մաշտոցի», Թարգմանութիւն եւ մեկնութիւն, 9. «Փաւստոս Բուզանդացի», Թարգմանութիւն եւ մեկնութիւն: Բացի սրանցից, ձեռագիր վիճակի մէջ են

<sup>3</sup> Պէտք է յիշել այս տեղ նաեւ Հայագիտութեան համար կարեւոր աշխատութիւնները.  
 Untersuchungen zur Geschichte von Eran. U. u. B. տեղաւ, Göttingen-Leipzig 1896—1906, նախ լոյս տեսած Philologus, 54 (1895), S. 489—527; 55 (1896), 212—240; եւ անդ, Supplementband, 10 (1905): Մասամբ Հայերէն Թարգմանուած՝ Հայաստան Բիւզանդացի. 1897, էջ 5—9, 183—186 «Փաւստոս Բիւզանդացի». 1898, էջ 316—330 «Հայագրապետ». 1906, էջ 33—44 «Ել մը Հայ Արշակունեաց հնագոյն պատմութիւն»:  
 Beiträge zur Geschichte und Sage von Eran. Z. f. D. M. G. 49 (1895), S. 628—672.  
 Armenische Streifen. I. Historische Data zur Chronologie der Vokalgesetze. II. Nachträge zu Eranšahr. Յ ու շ ա ր մ ա ն (Վիեննա 1911), էջ 291—302:  
 Hippolitus Werke IV: Die Chronik. Nebst einem Beitrag von J. Markwart, Leipzig 1929, 80, էջ 562: Այստեղ մանր ընկնութեան ենթարկած է Անանունի ժամանակագրութիւնը եւ Անանիա Շիրակացոյ գրութիւնները:  
 Խմբ. «Հանդիսի»:

գտնուում՝ «Դադատանի պատմական ցեղագրութիւնը», «Ատրպատական եւ Թուրք-Թաթարների նկրտումները» եւ այլն, որոնք ունին առնչութիւն Հայ բանասիրութեան հետ:

Այնուհետեւ, «Բագրատունեաց ծագումը» հատորի Հայ Թարգմանութեանը կցած իր յառաջարանում հաղորդում է հեղինակը, թէ ունի մի աշխատութիւն «Պատմութիւն Հայ մասնակի Թագաւորութեան» վերնագրով («Geschichte des armenischen Teilkönigtums»):

Վերջապէս, «Հանդէս Ամսօրեայ» ի խմբագրութեանը ուղղուած մի նամակից տեղեկանում ենք (տես «Յիշատակարան»), որ վերջինիս տրամագրութեան տակ է գրած եղել հանգուցեալը եօթը կտոր հետազոտութիւններ, որոնք բոլորը միասին պիտի կազմեն մի առանձին հատոր, Հայագիտական եւ կովկասագիտական բովանդակութեամբ: Համոզուած ենք, որ «Հանդէս» ի խմբագրութիւնը ջանք պիտի չինայէ հրատարակութեան տալու ոչ միայն իր տրամագրութեան տակ<sup>4</sup> գտնուած այս ուսումնասիրութիւնները, այլ եւ նոյն նպատակով հանգուցեալ ժողովուրդներից ստանալու նման ձեռագիրները:

Յովսէփ Բզեչխական, ինչպէս որ գերման մեծանուն Հայագետը իր անունագրանունը Թարգմանելով ստորագրում էր Հայերէն, որպէս գիտնական, բայց նաեւ որպէս մարդ ու ազնուագոյն Հայասէր, առ յաւելով պիտի յիշուի Հայ բանասիրութեան երախտաւորների շարքում:

Բերլին: ԴՂԿՏ. Ա. ԱՐԵՂԵԱՆ



ՄԿՐՏԻՉ ՊԱՐՍՍՄԵԱՆ. — Աւետիս Անարոնեան, իր կեանքը եւ գրականութիւնը. Պարիս, տպ. Մասիս, 1930, 80, էջ 199:

Եթէ չենք սխալիր, մօտաւորապէս հանդիսակատարութիւնը «Հայ ցաւին եւ Յոյսին» մեծ երգիչին՝ գրական գործունէութեան քառասնամեակին, առիթ եղած է քննադատաբանաստեղծ Մկրտիչ Պարսամեանի, ներշնչուելու գեղեցիկ եւ բարձր մտքերէ եւ պատրաստելու արժանաւայել մենագրութիւն մը նուիրուած վաստակաւոր Յորեղեալ վիպագիր-բանաստեղծին:

Շատ պատեհ եւ յարմար առիթ մէկ կողմանէ փարտեւել տեսակ մը մասնական եթէ ոչ գիտեալ մթութիւնը որով չըջապատուած է «Իմ Գիրք» ի հեղինակին կեանքը:

<sup>1</sup> Անոնի վերադարձում էին հեղինակին, իր լսնդրանքին համայնայն: ԽՄԲ. «ՀԱՆԳԻՍԻ»

անձնաւորութիւնը եւ մասնաւորապէս արուեստը... միւս կողմէ զինքը աւելի մերձեցնելու ընթերցող հասարակութեան սրտին, հողւոյն, երբ ան, ահա քառասուն երկարածիգ եւ միեւնոյն ատեն արգիւնալից տարիներէ ի վեր կ'երգէ ու կը պատմէ Հայ ժողովրդեան ցաւն ու յոյսը:

Գրագէտ մը եւ կամ արուեստագէտ մը միայն կրնայ ներկայացնողը ըլլալ գրագէտին եւ արուեստագէտին. եւ այս աշխատասիրութեան մէջ Պարսամեան յաջողած է լիպպէս, այնպէս որ շատ լաւ կրնայ կրկնել թէ՛ «Ես չեմ որ գրած եմ գիրքը, այլ ան է որ մէջս գրուած է...»:

Մեծադիր հատորիս առաջին երեսէն մինչև վերջին էջը, հեղինակն՝ Ահարոնեան շունչով կ'առաջնորդէ ընթերցողին. կը խորհրդածէ, կը քննէ եւ կը քննադատէ չէզոքի մը ոգով: Սոսկ յորեղեանական կենսագրութիւն մը չէ Պարսամեանի աշխատութիւնը. ան չէ հաւաքած ներբողականներ եւ կամ այլ եւ այլ նպատակաւոր դատաստաններ Յորեղեանի անձնաւորութեան եւ գրականութեան մասին. այլ ամենայն լրջութեամբ, անիկա կու տայ վերլուծական ուսումնասիրութեան միակ օրինակը մեր արդի գրականութեան («Գրականութեան եւ արուեստի տարրեր», էջ 133—149: «Մարդը», էջ 150—171, «Արուեստագէտը», էջ 172—186):

Եւ այս վերլուծական ուսումնասիրութեան մէջ Պարոն Պարսամեան ըմբռնած է թէ որչափ դժուար է ճշմարիտ արուեստագէտ մը ըլլալ, նոյնքան դժուարին զայն ճանչնալ: Անոր համար գրքիս հեղինակը շատ իրաւամբ կը մաքառի անոնց դէմ, որոնք Ահարոնեանի գրականութեան մէջ կը գտնեն «միօրինակ լար մը վշտի ու դուրով» (էջ 133):

Չմոռնանք որ Ահարոնեան Հայ ժողովրդեան ցաւերն երգած, նկարագրած է ո'չ իբրեւ վհատ մը, յոռետես մը եւ կամ յուսահատ մը. այնպէս որ եթէ Հայը յուսալից աչքերով նայած է ապագային, նոյնպէս եւ Ահարոնեան հետեւած է զրջով. «Ահարոնեանը զիեցնող ու մեծցնող մայր-ղզացունն է Հայրենիքի սէրը» (էջ 134): Եւ չենք կարծեր որ այս պակաս մը նկատուի Մեծ «Գարիպին» գրականութեան:

Ուրիշ աւելի հետաքրքրական էջերու մէջ Մեծ. հեղինակը կը պատմէ թէ ինչպիսի միջավայրի մէջ ապրած եւ գրած է Ահարոնեան (էջ 21—41). ինչպիսի ազդեցութիւններ հետք ձգած են վրան. թէ անոր գրական արտագրութիւնները՝ «Պուռ ըմ կաթ»էն սկսեալ մինչև «Իմ Գիրքը» եւ «Կարօտ Հայրենի» ինչպիսի պարագաներու տակ գրի առնուած են (էջ 42—86): Կարեւոր տուեալներ, լաւ ճանչնալու եւ գնահատելու հեղինակ մը, մանաւանդ գուտ ազգային, անթարգմանելի հեղինակ մը՝ որպիսին Աւե-

տիս Ահարոնեանն է, որ ներկայիս իւր ոճովը, առանձնայատուկ լեզուովը, թէեւ ոչ դասական, գրուած է Հայ ընթերցողներու սիրտը (էջ 87—132):

Ահա Պարսամեանի գործին շատ համառօտ բովանդակութիւնը. որուն վերջակէտն է լաւ խնամուած ցանկ մը Մեծ Յորեղեանի գրական պտուղներուն: Մինչև հոս ամէն առաւելութիւններով օժտուած աշխատասիրութիւն մըն է Պարսամեանի գործը. միակ պակասը (եթէ պակաս կարելի է անուանել), զոր նկատեցինք այն էր, որ Ահարոնեանի կենսագրութիւնը շատ համառօտ բովանդած է. մենք պիտի բաղձայինք որ Պարսամեան իր անոյշ ոճովը, այն ոճով որով սակէ տարիներ յառաջ իրմէ խմբագրուած «Շանթ» ի էջերու մէջ կու տար նկարագրող պատմուածքներ, պատմէր մեզի, ըսէր աւելի շատ բան...: Առանց տարակուսի այս պահուս աւելի հարկաւոր էր մեզի քառասնամեայ գրական գործունէութեան պատմութիւնը, ճիշտ այնպէս, ինչպէս կը գտնենք այս աշխատասիրութեան մէջ. բայց չենք հաւատար թէ տասը էջերու մէջ ամփոփուած կենսագրական ծանօթութիւնները բաւական ըլլան անոնց, որոնք հմայուած են Ահարոնեանի հանճարէն: Այսչափ մեր դիտողութիւնները, որոնք ոչ մէկ ծանրութիւն կը կշռեն...:

Շնորհաւորելի է Մ. Պարսամեան, որ կրցած է այսպիսի մեծ աշխատութիւն մը ի գլուխ հանել. անխառն, մաքուր լեզուն, ընտիր ճաշակը բաղադրած են միակ օրինակը գեղեցիկագոյն գրական աշխարհաբարին եւ միեւնոյն ատեն դասական օրինակը լուրջ, գրական ուսումնասիրութեան:

Ն. Կ. ՏԵՐՄՈՅԵԱՆ

### Resumé der wichtigsten Abhandlungen

Das Klageged des Moses Khorenatzi ist das Schlußwort der Geschichte des Priesters Leontius. Von P. N. Akinian. S. 10—41.

1. Das Klageged am Ende „der Geschichte der Armenier“ von Moses Khorenatzi (III. 68), ist dem Inhalte nach ein Anachronismus, zeitlich unvereinbar mit III. 67.
2. Die Wetterberichte, die politischen und kulturellen Verhältnisse deuten auf die Ereignisse der zweiten Hälfte des 8. Jahrhunderts (750—773) in der Weise, wie sie bei Pseudo-Dionysius von Tell-Mahré und